

РАДИО?

ЭТО ОЧЕНЬ ПРОСТО!

ՊԱՐՋ ԵՎ ՀԵՏԱՔՐԶԻՐ



Գոսէներգոյզատը (Պետական էներգետիկական հրատա-
րակչություն) «Մասսայական ռադիոգրադարան» սերիայով ծու-
սերեն հրատարակել է Ե. Ալսբերգի «Ռադիո... դա շատ պարզ
է» գիրքը: Այն թարգմանված է ֆրանսերենից և, ինչպես իրավա-
գիտա-հանրամատչելի ռադիոտեխնիկական գրականության մեջ
աշխարհում ամենահայտնի գիրքն է: Կարճ ժամանակամիջոցում Ֆրանսիայում հրատարակվել է 26
անգամ և թարգմանվել 12 երկրներում: Այն մեծ մասսայականությունը, որ վայելում է Ե. Ալսբերգի
գիրքը Ֆրանսիայում և Հունաստանում, Իտալիայում և Չեխոսլովակիայում, Արգենտինայում և Հուն-
գարիայում, Լեհաստանում և Ռումինիայում, հիմնականում բացատրվում է այն բանով, որ գրված է
պարզ և լուրջ, հետաքրքիր, գիտականորեն հագեցված և, որ ամենագլխավորն է, տաղանդավոր:
Ռադիոտեխնիկայի ամենաբարդ և լուրջ հարցերը բացատրվում են սրամիտ, հասկանալի ձևով և
միաժամանակ առանց զեռիկի հասարակացման: Այդ գիրքը կարելի է հավասար կերպով համարել
և գիտական և հանրամատչելի:

«Ռադիո... դա շատ պարզ է» գիրքը գրված է երկու անձի միջև տեղի ունեցող պրուլցի
ձևով: Դրանցից մեկը՝ Գիտունիկը, հիանալի, խոր կերպով ըմբռնում է ռադիոտեխնիկայի հար-
ցերը և կարող է պարզորեն բացատրել ռադիոտեխնիկայի տեսությունը: Մյուսը՝ Անգետիկը, ինչ-
պես հեղինակն է ասում, «... մարմնացած տգիտությունն է: Կապերը վերջնականապես հպելով մա-
թեմատիկայի հետ, նա հազիվ լուրացրել է ֆիզիկայի սկզբունքները»: Բայց նա ամենևին էլ հիմար
չէ. պրուլցի ընթացքում, առաջարկելով հարցեր և ստանալով լիարժեք ու սրամիտ պատասխաններ,
նա գալիս է այն ելրակացության, որ՝ «ռադիո... դա շատ պարզ է»:

Գիրքը նախատեսված է սկսնակ ռադիոսիրողների և նրանց համար, ովքեր ցանկանում են
ուսումնասիրել ռադիոտեխնիկայի սկզբունքները: Այն հետաքրքրությամբ կկարդան նաև բարձր
դասարանների աշակերտներ ու բուհերի ուսանողներ, ինժեներներ ու տեխնիկներ՝ ընթերցողների
շատ լայն շրջան:

Այս գրքի ընթերցման համար չի պահանջվում էլեկտրականության և ֆիզիկայի մասին որևէ
նախնական գիտելիք: Բոլոր անհրաժեշտ տեղեկությունները հեղինակը շատ մատչելի ձևով տալիս
է շարադրման ընթացքում:

Սկսնակ ռադիոսիրողը գրքից կարող է ստանալ բոլոր այն տեղեկությունները, այն այբուբենը,
որ անհրաժեշտ է նրան ռադիոտեխնիկական կրթության հիմքը դնելու համար: Նույնիսկ նրանք,
ովքեր մասնագիտանում են ռադիոտեխնիկայում, կարող են օգտագործել այս գիրքը, իրենց կողմից
կուտակած առանձին նորությունները և իմացածը սխտեմավորելու համար:

Բոլոր բացատրությունները հեղինակը տալիս է ֆիզիկական խոր հիմնավորումով, օգտագոր-
ծելով ժամանակակից գիտության սկզբունքները և, միաժամանակ, առանց բարդ, դժվարըմբռնելի
մաթեմատիկական ապարատի:

Գիրքը կարող է օգտակար լինել նաև նրանց, ովքեր ցանկանում են պրաղվել ռադիոընդունիչ-
ների նախագծումով:

Թե որքան պարզ ու հետաքրքիր են շարադրված ռադիոտեխնիկայի հարցերը գրքում, կարելի
է համոզվել թեկուզ և այն հատվածից, ուր տրվում է ռադիոալիքների և նրանց երկարության
բացատրությունը: